Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ ԹԻՎ 353-Ա-357-Ա, ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ ԹԻՎ 358-Ա-365-Ա, ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 366-Ա, ՄԱՅԻՍԻ 13-Ի ԹԻՎ 368-Ա, ՄԱՅԻՍԻ 16-Ի ԹԻՎ ԹԻՎ 369-Ա, 370-Ա, ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ ԹԻՎ 372-Ա-382-Ա, ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ ԹԻՎ 383-Ա-385-Ա ԵՎ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 386-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 353-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 1-ին, այլ՝ 3-րդ կետի դրույթներին, քանի որ որոշման մեջ փոփոխություններ են կատարվել նախադասությունները նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով: Բացի այդ, որոշումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Թիվ 354-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Թիվ թիվ 355-Ա, 359-Ա և 360-Ա որոշումների նախաբաններում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներին կատարված հղումը սխալ է գրառված:

Թիվ թիվ 356-Ա, 362-Ա, 372-Ա-375-Ա, 378-Ա-382-Ա որոշումների բովանդակությունների մեջ, թիվ թիվ 355-Ա, 359-Ա, 360-Ա, 383-Ա և 384-Ա որոշումների 1-ին կետերով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթին:

Թիվ թիվ 374-Ա, 378-Ա և 379-Ա որոշումներում անհրաժեշտ է գրառում կատարել նաև անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերյալ:

Թիվ թիվ 357-Ա, 364-Ա և 365-Ա որոշումների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշումների 1-ին կետերին, իսկ 1-ին կետերը՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթին:

Թիվ թիվ 358-Ա և N377-Ա որոշումների վերնագրերում և դրույթներում հղումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական

համարը, բնույթը և տեսակը: Բացի այդ, որոշումների բովանդակություններում անհրաժեշտ է գրառել փոփոխվող իրավական ակտերի լրիվ անվանումը:

Թիվ թիվ 362-Ա և 375-Ա որոշումների դրույթներն անհրաժեշտ է շարադրել հստակ և առանձին համարակալված կետերի տեսքով:

Թիվ 368-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածների դրույթներին:

Թիվ 369-Ա որոշման մեջ կիրառվել են հապավումով գրառված բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների հապավումներ:

Թիվ 370-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ և 18-րդ հոդվածի 6-րդ մասերի պահանջներին:

Թիվ 386-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներին կատարված հղումը սխալ է գրառված:

Թիվ թիվ 353-366, 368-370, 372-383, 385 և 386 որոշումների ձևաթղթերի վերևի մասում համայնքի ղեկավարի պաշտոնը թերի է գրառված:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
27.06.2022թ.